

ԳՐԵՏԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ Հ^տ 7639 ՁԵՌԱԳՐԻ
ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԻ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ԱՆՎԱՆԱԹԵՐԹԵՐԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.177

ԱՄՓՈՓՈՒՄ

Պատմական, աստվածաբանական, բանասիրական, բնագիտական, իրավական և մի շարք այլ ոլորտներին առնչվող նյութերի բացառիկ շտեմարան են Մաշտոցյան Մատենադարանում (այսուհետ՝ ՄՄ) հանգրվանած ձեռագիր մատյանները, որոնք ուսումնասիրման անսպառ նյութ են հետազոտողների համար: Արվեստաբանական ուսումնասիրությունները մեծավ մասամբ նվիրվում են հայկական ձեռագրերի գեղարվեստական հարդարանքի քննությանը, որոնք գերազանցապես առնչվում են հայկական մանրանկարչության վաղ և զարգացած փուլին, մինչդեռ պակաս կարևոր չեն նաև ուշ միջնադարում ստեղծված ձեռագիր մատյանները:

Պատմական տեսանկյունից ուշ միջնադարը ևս բարենպաստ ժամանակաշրջան չէր արվեստի զարգացման համար. պետականությունից զրկված հայ ժողովուրդը գտնվում էր Սեֆյան Պարսկաստանի և Թուրքիայի կողմից հրահրվող պատերազմների բռնության: Այսպիսով, նրանց միջև հերթական պատերազմը հանգեցրեց 1604 թ. Նախիջևանի շրջանի Զուղա բնակավայրից և հարակից շրջաններից հայ ժողովրդի բռնագաղթին. «Ի սարասուր ձմեռնացեալ վերջի դարուցս թագաւորն Պարսից շարժեցաւ ըստ պարշաճին իւրոյ ի վերայ մեր ազգ//իս. Աւերեաց գրունս Հայոց, առեալ զՀայքս, ժողովելով քարերացս արմաքախիլ արար և երեր մինչ ի վիճակն և աստ նաւահանգիստ արար և բնակեցոյց: Եւ սկսաք շինել գրունս և զեկեղեցիս բարձրագոյն և պայծառ քան

գառաջինն: Եղաք նոր քաղաք և կոչեցաւ անուն Նոր Զուղայ» (ՄՄ Հ^Ժ 7639; Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա. 1974):

Թեպետ հայոց պատմության այս դժվարին ժամանակներին, Նոր Զուղայում հաստատված հայ վարպետները զբաղվել են եկեղեցաշինությամբ, գրել ու նկարազարդել տասնյակ ձեռագիր մատյաններ: Այս գրչության կենտրոնի մասին համառոտ ներկայացրել է Նոր Զուղայի Սբ Ամենափրկիչ վանքի թանգարան-տպարանի երկարամյա տնօրեն, նորջուղայեցի պատմաբան և բանասեր Լևոն Մինասյանը (**Մինասյան Լ., 1991**), իսկ Նոր Զուղայում գրված ձեռագրերի մասին արվեստաբանական տեսանկյունից բազմիցս անդրադարձել է Միքայել Առաքելյանը (**Առաքելյան Մ., 2008**): Հակոբ Զուղայեցու նկարազարդած մի Ավետարանի մասին հրատարակվել է կատալոգ-ուսումնասիրություն (**Greenwood T., Vardanyan E., 2006**): Հատկանշական է շեշտել, որ նշանավոր ծաղկող Հակոբ Զուղայեցու մասին մի սովորածավալ աշխատություն հրատարակել է արվեստաբան Իրինա Դրամփյանը (**Дрампян И., 2008; Դրամփյան Ի., 1971**): Նրա աշխատանքում համառոտ անդրադարձ է եղել նաև սույն ձեռագրի ոճական առանձնահատկություններին: Թեպետ արվեստաբան Դրամփյանի հիմնարար ուսումնասիրությանը, սույն հետազոտության խնդիրը Հակոբ Զուղայեցուն վերագրվող ՄՄ 7639 ձեռագրի ավետարանիչների դիմանկարների և անվանաթերթերի գեղարվեստական հարդարանքի առավել ընդարձակ նկարագրություն-քննությունն է: Այս ուսումնասիրության մեջ ընդգրկված չեն Զուղայեցուն վերագրվող մյուս ձեռագրերում պատկերված ավետարանիչների դիմանկարները, քանի որ նպատակ ունենք հետազայում մանրամասն անդրադառնալ դրանց ոճական առանձնահատկություններին:

Քանալի բառեր և Արտահայտություններ. Մալբենադարանի հավաքածու, Նոր Զուղա, Նոր Զուղայի մանրանկարչական դպրոց, Հակոբ Զուղայեցի, Ավետարան, ավետարանիչ, անվանաթերթ, մանրանկար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մինչ Նոր Զուղայում հայերի հաստատվելը, պատմական Զուղա քաղաքն ունեցել է մշակութային մի այնպիսի միջավայր, որն առանձնացել է հարակից շրջաններից: Վասպուրականի, Խիզանի, Ամիդի մանրանկարչական դպրոցներով շրջապատված և նրանց հարևանությամբ գտնվող Զուղայում ևս գրվել ու նկարազարդվել են ձեռագրեր, որոնց գեղարվեստական ոճը որոշ դեպքերում նմանվում է միմյանց: Հետաքրքրական է, որ ստեղծվել էր մի այնպիսի միջավայր, որտեղ արդեն իսկ կային հայտնի ծաղկող վարպետներ, որոնց մոտ աշակերտելու էին գնում հարակից շրջաններից անգամ: Շահաբբասյան բռնագաղթից հետո Զուղայի նշանավոր վարպետներից Հակոբը հաստատվեց Նոր Զուղայում: Ըստ Դրամփյանի ուսումնասիրության՝ Հակոբ Զուղայեցին նկարազարդել է 9 ձեռագիր.

80-ականների առաջին կես – Ավետարան, ՄՄ Հ^մ 6758, 2. 1585 թ. – Ավետարան, ՄՄ Հ^մ 9691, 3. 1586 թ. – Ավետարան: Մինչև 1980 թ. գտնվում էր Փարիզի Սևաճյան մասնավոր հավաքածուում, երբ Համբուրգում աճուրդի հանվեց: Ձեռագրի հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ¹, 4. 1587 թ. – Ավետարան, Մանչեսթեր, Ջոն Ռայլենդսի գրադարանի հավաքածու, «Arm. N° 20», 5. 1592 թ. – Ավետարան, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք, ձեռագիր Հ^մ 3424, 6. 1607 թ. – Ավետարան, Նոր Զուղայի Սուրբ Սարգիս եկեղեցի, ձեռագիր Հ^մ 18², 7. 1610 թ. – Ավետարան, ՄՄ Հ^մ 7639, 8. ԺԶ դար – Կեղծ Կալիսթենեսի՝

¹ Արվեստաբան Դրամփյանի նշած 1586 թ. գրված Ավետարանը այժմ պահվում է Տոլեդոյի արվեստի թանգարանում «2023.311» համարի ներքո: Տոլեդոյի թանգարանի կայքում բաց հասանելությամբ ներկայացված է ձեռագրի կազմի, խորանների, ավետարանիչների և նրանց անվանաթերթերի, մանրանկարների լուսանկարները: Նկարագրության բաժնում առկա է «Գնված է Libbey Endowment-ի միջոցներով, Էդվարդ Դրամոնդ Լիբբիի նվերը, փոխանակումով» գրությունը: Մանրամասն տե՛ս <http://emuseum.toledomuseum.org/objects/82098/the-pozzi-gospels-hakobs->

[gospels?sessionid=6D583D7BEC7AAF8831E365A33F786C0C?fbclid=IwY2xjawE7zWlleHRuA2FlbQlxAABHxPFBjXai_g4euHlv4RE10dYSAon8wj6gmuBycZ8tIH6cLNgFqXUB4CMQ_aem_RP7GgChhAtusgASKRYi0ZQ](http://emuseum.toledomuseum.org/objects/82098/the-pozzi-gospels-hakobs-gospels?sessionid=6D583D7BEC7AAF8831E365A33F786C0C?fbclid=IwY2xjawE7zWlleHRuA2FlbQlxAABHxPFBjXai_g4euHlv4RE10dYSAon8wj6gmuBycZ8tIH6cLNgFqXUB4CMQ_aem_RP7GgChhAtusgASKRYi0ZQ): Ձեռագրի մասին ուսումնասիրությունը հրատարակված է նաև գրքի տեսքով (**Greenwood T., Vardanyan E., 2006**).

² Ինչպես Յուզակ ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի Ա հատորում (էջ 149), այնպես էլ Նոր Զուղայում մեր կատարած ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ արվեստաբան Դրամփյանի վերոթվարկած ձեռագիրը ոչ թե Սուրբ Սարգիս եկեղեցու Հ^մ 18

Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, ՄՄ Հ^մ 5472, 9. 1613 թ. - Ճաշոց, Նոր Զուլայի Սուրբ Ստեփանոս եկեղեցի, ձեռագիր Հ^մ 491 (**Дрампа И., 2008**):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը կատարվել է արվեստաբանական վերլուծության՝ նկարագրական և քննական մեթոդների կիրառմամբ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հակոբ Զուլայեցուն վերագրվող Ավետարանների մեջ ոճով և գեղարվեստական լուծումներով առանձնանում է Մատենադարանի Հ^մ 7639 ձեռագիրը: Այն ըստ ձեռագրի 294ա էջի հիշատակարանի տվյալի՝ գրվել է 1610 թ. Շոշում³: Ինչպես տեղեկանում ենք Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի առաջաբանից՝ Հ^մ 7639 ձեռագիրը գտնվել է Թիֆլիսի Նորաշենի Սբ Աստվածածին եկեղեցում, հետագայում 94 ձեռագրերի հետ միասին տեղափոխվել է Երևանի Կերպարվեստի թանգարան: Տարիներ անց դարձել է նշյալ թանգարանից Մատենադարանին փոխանցված ձեռագրերից մեկը (**Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաթյան Փ., 1965**): Մատենադարանի հավաքածուում Նոր Զուլայում կամ Սպահանում գրված ձեռագրերի շարքում Հ^մ 7639 ձեռագիրը թվով երրորդն⁴ է Շահ Աբբասի կազմակերպած գաղթից հետո Նոր Զուլայում նկարագրված ձեռագրերի շարքում:

ձեռագիրն է, այլ Հ^մ 8: Հետևաբար առաջնորդվելով ձեռագրացուցակի տվյալներով՝ նշվում է Ս. Սարգիս 396 (8):

³ Ուսումնասիրության ընթացքում «Շոշ» գրության տարբերակը կասկածի տեղիք տվեց, քանի որ իրանական աղբյուրներում Սպահան անվան Շոշ հիշատակում նախկինում չի եղել: Սույն հարցը մեկնաբանել է Լևոն Մինասյանը՝ գրելով. «Սպահան քաղաքը, որին մեր գրիչները Շոշ անուն են տվել, շփոթելով Խուզստանի Շուշ-Դանիէլի հետ, մինչև 20-րդ դարի 30-40-ական թվերը, իր մեջ չէր ընդգրկում Նոր Զուլան... Գրչագրերի որպես վայր, թեև շատերի վրայ է գրված Սպահան կամ Շոշ, բայց պետք է նկատի ունենալ, որ մինչև 1655 թիվը, կարող է գրչագիրը գրված լինի Սպահան քաղաքամիջում, եթե Զուլայի եկեղեցիների անունը յիշուած չէ, իսկ այդ թից յետոյ, եթե Սպահան էլ գրված լինի պետք է համարել Նոր Զուլա, քանի որ այդ թից յետոյ Սպահան քաղաքամիջում այլևս հայեր չեն ապրել, գոնեայ 17-րդ և 18-րդ դարերում: Ահա այս նկատառումով էլ Սպահան և Շոշը, յարկապէս 1655 թից յետոյ, մենք շատ անգամ գրել են Նոր Զուլա, որ նոյնն է Սպահանի հետ» (**Մինասյան Լ., 1991**):

⁴ Առաջին ձեռագիրը (ՄՄ Հ^մ 6785) Ավետարան է՝ թվագրված 1607 թ.: Այն սկսել է գրվել Խիզանում, այնուհետև անցել գաղթի ճանապարհով և ավարտին հասցվել Սպահանում (**Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաթյան Փ., 1970**): Թվագրությամբ երկրորդ ձեռագիրը (ՄՄ Հ^մ 8172)

Ձեռագրի գեղարվեստական հարդարանքը՝ այդ թվում գիրը, դրա տեսակը, մանրանկարները, դրանց քանակն ու դրանում ոսկու կիրառումը մեծամասամբ բնորոշում էր տվյալ ձեռագրի պատվիրատուին, նրա ճաշակն ու արվեստի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը: Այդ հատկանիշներն էլ արտահայտվում էին ձեռագրում՝ հաճախ նաև պատվիրատուի «թելադրմամբ»: Ավետարանի պատվիրատուն ժամանակի նշանավոր խոջա Ավետիքն է (ձեռագրի հիշատակարաններում հանդիպում է նաև «Աւետիս» տարբերակով): Մեծահարուստ անձի կողմից պատվիրած ձեռագիրն աչքի է ընկնում իր յուրահատուկ ոճավորմամբ, պատկերագրական բացառիկ տեսարաններով և զարդամոտիվներով: Հ^մ 7639 ձեռագիրը սկսվում է Տերունական շարքի պատկերներով, որին հաջորդում է Քրիստոսի հրաշքների և փորձությունների տեսարանները: Դրանք ընդհանուր թվով 59-ն են: Շարքին հաջորդում է 10 խորանները:

Հ^մ 7639 ձեռագրի 73բ էջից մինչև 299ա էջերին են ներկայացվում Մատթեոս, Մարկոս, Դուկաս և Հովհաննես ավետարանիչների Ավետարանները: Ընդ որում՝ չորս ավետարանչի յուրաքանչյուր Ավետարան նկարազարդման ուրույն ձևն ունի: Մատթեոս ավետարանչի դիմանկարը և անվանաթերթը գտնվում է Ավետարանի 73բ և 74ա էջին: Ավետարանչի պատկերն (նկ. 1) ամփոփված է ուղղանկյուն շրջանակի մեջ, որի վերին և ստորին եզրերում կան կարմիր և վարդագույն շղթայական մոտիվներով զարդարված եռանկյունաձև դուրս բացվածքներ, իսկ աջ և ձախ եզրերում՝ կապույտ, կանաչ խաչաձև և եռաստիճան մոտիվներով զարդարված կիսաշրջանաձև ելուստներ, որոնց շուրջբոլորը կապույտով բարակ ծաղկային մոտիվներ են: Հորինվածքի կենտրոնում Մատթեոս ավետարանիչն է՝ պատկերված աթոռի վրա՝ նստած դիրքով: Կանաչով և վարդագույնով երանգավորված է ավետարանչի հագուստը,

Ժողովածու է՝ գրված 1608 թ.: Ժողովածուի բովանդակությունն է «Հարցմունք և պատասխանիք հոգևորք, Հարցմունք Աթանասի և պատասխանիք Կիրղի Երուսաղեմացոյ, Գր. Մարաշեցոյ Վայք ողբոց, Ի Կանոնագրոց Հայոց, Վարդ. Արեւելցոյ Աշխարհացոյց»: Գրիչ՝ Սիմէոն, Յովհաննէս արեղայ (Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ., 1970):

որի լուսաստվերի հաղորդման և գունային համադրության մանրամասն ուսումնասիրելու արդյունքում ակնհայտ է ծաղկողի վարպետությունը: Ավետարանչի պատկերն ամբողջացվում է լուսապսակով, որի ծայրերը երիզված են սպիտակ կետերով: Այն ամփոփված է խորան հիշեցնող կամարի մեջ, որը կազմված է շեղ հատվածներից՝ մեկ գույնի մի քանի երանգավորմամբ քառակուսիների հաջորդական ներկայացմամբ: Ուշագրավ են հատկապես երկու անկյուններում պատկերված հրեշտակները, որոնց հայացքներն ուղղված են դեպի Մատթեոս ավետարանիչը: Սովորաբար մեծ թիվ են կազմում այն ձեռագրերը, որոնցում Մատթեոս ավետարանչին ներկայացնող էջում պատկերված է լինում նաև իրեն խորհրդանշող մարդ-հրեշտակը: Մատենադարանում պահվող Նոր Զուղայում նկարազարդված Ավետարանների ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ Հ^մ 7639 Ավետարանի այս մանրանկարը բացառիկ է մասնավորապես խորհրդանիշ մարդ-հրեշտակի կրկնակի պատկերմամբ:



Նկ. 1. Մատթեոս ավետարանչի դիմանկարը և անվանաթերթը, ՄՄ 7639, 1610 թ., Նոր Զուղա, 73բ-74ա (լուսանկարը՝ ՄՄ)

Գեղարվեստական յուրատիպ լուծումներով է արված Մատթեոս ավետարանչի անվանաթերթը (նկ. 1), որի գերակշիռ մասը զբաղեցնում է կիսախորանը: Վերևում, ինչպես ընդունված է ասել, հավատի աղբյուրից սնվող թռչուններն են: Հորինվածքի կենտրոնում վեցաթև աստղի և ծաղկաթերթի՝ անվերջություն հիշեցնող զարդամոտիվն է: Կիսախորանի ողջ հատվածում Հակոբ Զուղայեցու ձեռագրին բնորոշ այն մանրամասներն են, որոնք հանդիպում են նաև ձեռագրի մյուս էջերի առանձին հատվածներում և ամբողջական էջով ներկայացված մանրանկարներում: Կարծում ենք, որ ծաղկողը սովորաբար այս մոտիվները պատկերել է ազատ տարածությունները լրացնելու և մանրանկարներն առավել հագեցված պատկերագրությամբ ներկայացնելու համար: Ճակատագարդի երեք կողմում առկա է հետևյալ արձանագրությունը. «ԸՐՍՍԱՅՈՂ ՍՈՐԱ ԶԽՕՋԱ ԱԻԵՏԻԿՆ ԵՒ ԶԵՂԲԱՅՐՆ ԶԽՕՋԱ»: Այն ամփոփած է ութ ուղղանկյունաձև հատվածում, որոնց միջև տեսանելի են նարնջագույն շրջանաձև մոտիվները:



Նկ. 2. Մարկոս ավետարանչի դիմանկարը և անվանաթերթը, ՄՄ 7639, 1610 թ., Նոր Զուղա, 137բ-138ա (լուսանկարը՝ ՄՄ)



Նկ. 3. Ղուկաս ավետարանչի դիմանկարը և անվանաթերթը, ՄՄ 7639, 1610 թ., Նոր Զուղա, 179թ-180ա (լուսանկարը՝ ՄՄ)

Մարկոս (նկ. 2) և Ղուկաս (նկ. 3) ավետարանիչների դիմանկարները հորինվածքային առումով ունեն բավական նմանություններ: Ծաղկողը փորձել է հնարավորինս հագեցնել պատկերը՝ ներկայացնելով ավետարանիչներին բավական ուրույն միջավայրում, հավատարիմ մնալով նաև ավանդական պատկերագրությանը, երբ ավետարանիչներին ներկայացնում էին գահավորակին նստած Ավետարանը գրելիս՝ իր աշխատանքային գործիքների, գրասեղանի առկայությամբ: Այստեղ ծաղկողը թերևս ցանկացել է միաժամանակ և՛ պահպանել կանոնիկ ավանդական պատկերագրությունը, և՛ միևնույն ժամանակ միջավայրին բնորոշող մանրամասները ներկայացրել է խիստ ոճավորված, լի բազմաթիվ մանր զարդամոտիվներով: Թվում է, թե այդ զարդամոտիվները սկսում են առավել շատ դեկորատիվ բնույթ կրել՝ դրանով գեղարվեստական մի նոր որակ հաղորդելով պատկերներին: Հետաքրքրական է այն փաստը, որ ծաղկողը փորձել է հնարավորինս ազատ տարածություն չթողնել, իսկ եթե եղել է, պատել է այն ոսկով: Նոր Զուղայում նկարազարդված ձեռագրերի

ուսումնասիրման ընթացքում հաճախ նկատել ենք ավետարանիչների պատկերներ, որում ներկայացված են նաև նրանց խորհրդանիշերը՝ մեծ մասամբ ներշնչված Եվրոպայում նկարազարդված ձեռագրերի և տպագիր գրքի օրինակներով: Խնդրո առարկա օրինակում հանդիպում է ավանդական պատկերատիպ՝ հորինվածքի աջ հատվածում, ավելի փոքր չափսերով, լուսապսակով, գլուխն ուղղած դեպի ավետարանիչը: Հովհաննեսի դիմանկարում (նկ. 4) ծաղկողը ավետարանչին ներկայացրել է տարբեր երանգավորմամբ գունավոր ժայռերի նմանող միջավայրում, որով նրա պատկերն ասես կտրվել է ոսկով պատված հետնախորքից: Գունազարդ ժայռերը խորհրդանշում են այն բացված քարայրը, որտեղ աստվածային ներշնչանքով Հովհաննես ավետարանիչը թելադրել է Ավետարանը իր աշակերտ Պրոքորոնին: Բյուզանդական պատկերագրության ավանդույթով ներկայացված այս օրինակում Հովհաննեսի հայացքն ուղղված է հորինվածքի ձախ վերնամասում պատկերված երկնականարը, մի ձեռքով պահել է հագուստը, իսկ մյուսն ուղղել նրանից ձախ գտնվող աշակերտը: Ավետարանիչների դիմանկարները ստանալիս ծաղկողը կարծես կիրառել է դեմքի նույն կաղապարը, որում առանձնանում է ընդգծված աչքերը և հոնքերը, բավականին մանրամասն ներկայացված մորուսն ու մազերը և հատկապես աչքերի կարմիր բծերը, որը համարում ենք ծաղկողի անհատական ձեռագրի բնորոշ հատկանիշներից մեկը:



Նկ. 4. Հովհաննես ավետարանչի դիմանկարը և անվանաթերթը, ՄՄ 7639, 1610 թ., Նոր Զուղա, 245բ-246ա (լուսանկարը՝ ՄՄ)

Մատթեոս ավետարանչի անվանաթերթին ծաղկողի թողած հիշատակության պես Մարկոսի անվանաթերթի (նկ. 2) կենտրոնական հատվածում ևս տեսնում ենք «Ավետիք ծառա Քրիստոսի» գրությունը։ Ի տարբերություն նշյալ երկու անվանաթերթերի, Ղուկաս և Հովհաննես ավետարանիչների (նկ. 3, 4) անվանաթերթերը տարբերվում են իրենց ոճավորմամբ։ Մասնավորապես պատկերագրական տեսանկյունից յուրահատուկ է Հովհաննես ավետարանչի անվանաթերթը (Նկ. 4), որի ճակատագարդի կենտրոնական մասում ներկայացված է Տիրամայրը՝ Մանուկ Քրիստոսը գրկին։ Մատենադարանի հավաքածուի Նոր Զուղայում նկարագարոված ձեռագրերի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ անվանաթերթի այսպիսի պատկերումը բացառիկ է։ Մինչդեռ, ուսումնասիրելով Հակոբ Զուղայեցուն վերագրվող, ավելի վաղ շրջանում նկարագարոված ձեռագրերը՝ նկատում ենք, ՄՄ Հ^մ 9691 ձեռագրի 222ա էջին՝ կրկին Հովհաննես ավետարանչի անվանաթերթի ճակատագարդի կենտրոնական մասում,

պատկերված են Քրիստոսը և Տիրամայրը: Անվանաթերթերին Տիրամոր և Քրիստոսի պատկերը հանդիպում է նաև զարգացած միջնադարում ստեղծված ձեռագրերում: Ինչպես օրինակ մանրանկարչությունից մեզ հայտնի է Թորոս Տարոնացու նկարազարդած ՄՄ 6289 ձեռագրի՝ Մատթեոսի, Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթի պատկերները (**Բեգլարյան Ս., 2022**):

Չորս ավետարանիչների Ավետարանի գեղարվեստական հարդարանքում առանձնանում է չորս հիմնական հորինվածքային լուծում՝ ընդ որում յուրաքանչյուր ավետարանչի Ավետարանը՝ իր խորհրդանիշով: Այդ օրինաչափությամբ 74բ էջից մինչև 136ա էջերին Մատթեոս ավետարանչի՝ երկու սյուներով ներկայացված Ավետարանն է: Ճակատազարդերի պատկերման մեջ երկու զույգ մարդակերպ կերպարներն են, որոնք երկու ձեռքով պահում են ճարտարապետական մանրամասնը: Այն նմանվում է հնգախորան եկեղեցու, որի յուրաքանչյուր գմբեթ պսակվում է խաչով: Ինչպես գիտենք, Մատթեոս ավետարանչի խորհրդանիշը մարդ-հրեշտակն է: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ իր դիմանկարի հետնախորքում պատկերված են զույգ թևերով երկու հրեշտակներ, իսկ իր Ավետարանի նկարազարդման դեպքում՝ մարդակերպ կերպարներ: Այդ նույն ձևով են ոճավորվել նաև Մարկոս և Ղուկաս ավետարանիչների Ավետարանները՝ մասնավորապես 138բ էջից 179ա էջերի երկայուն գրադաշտերը պսակվում են զույգ առյուծների կերպարով և կամարներով, իսկ 180բ էջից 245ա էջերին Ղուկաս ավետարանչինը՝ ցլակերպ մոտիվներով: Նկարազարդման նման համակարգը տարբերվում է 246բ էջից մինչև 299ա էջերին, որտեղ Հովհաննես ավետարանչի երկայուն Ավետարանը պսակված է միահյուսված զարդամոտիվներով, որի կենտրոնում երկզույն զույգ թռչուններ են, որոնք հավանաբար ծաղկողը փորձել է ներկայացնել որպես Հովհաննես ավետարանչի խորհրդանիշ արժիվ թռչունին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ՄՄ 7639 ձեռագիրը գրվել է շահաբբասյան բռնագաղթից ընդամենը մի քանի տարի հետո՝ մի դժվարին ժամանակաշրջանում, որի մասին

հիշատակարանում նշվում է. «աւերեաց զըրունս Հայոց, առեալ զՀայքս, ժողովելով փարերացս արմատախիլ արար և եբեր մինչ ի վիճակն և աստ նաւահանգիստ արար և բնակեցոյց: Եւ սկսաք շինել զըրունս և զեկեղեցիս բարձրագոյն և պայծառ քան զառաջինն: Եղաք նոր քաղաք և կոչեցաւ անուն Նոր Զուղայ: Եւ աստ գրեցաւ արեգակնափայլ Աւետարանս ոսկիապատ և երանգ երանգ լաջուարդանկար և գոյնազարդ տետուջ, շարունակեալ դրուարս, յարմարեալ և խորանիս ձևն երկնազարդ նմանութեամբ յարինեալ բազում աշխատութեամբ» (ՄՄ Հ^ր 7639): Այն բացառիկ արժեք է ներկայացնում ոչ միայն ձեռագրի գրվելու պատմական ժամանակահատվածի, այլ նաև նկարազարդ էջերի բովանդակային բազմազանության ու թեմատիկ պատկերների գեղարվեստական հարդարանքի տեսանկյունից:

Սույն հոդվածում քննության ենթարկվեցին նախ Հակոբ Զուղայեցուն վերագրվող ձեռագրերի տվյալները՝ մասնավորապես ճշգրտվեց նախկինում հրատարակված ուսումնասիրության մեջ առկա ձեռագրերի համարները, մեկ այլ ձեռագրի գտնվելու վայրը: Արվեստաբանական տեսանկյունից վերլուծվեցին Հ^ր 7639 ձեռագրի ավետարանիչների դիմանկարներն ու անվանաթերթերը, Ավետարանի նկարազարդման հորինվածքային լուծումները: Ակնհայտ է, որ նման նկարազարդ էջեր պարունակող Ավետարանից անմասն չէին կարող մնալ նաև ավետարանիչների դիմանկարներն ու անվանաթերթերը, որոնք ներկայացված են ձեռագրում միասնական էջաբացվածքներին:

Չորս ավետարանիչները պատկերված են աստվածային ներշնչման պահին՝ ըստ որի Մատթեոս, Մարկոս, Ղուկաս ավետարանիչները՝ Աստծո խոսքը գրի առնելիս, իսկ Հովհաննեսը՝ իր աշակերտին ներշնչված թելադրելիս: Ծաղկողը յուրաքանչյուր ավետարանչի պատկերել է գունային և հորինվածքային բարդ լուծումներ ունեցող հագեցած միջավայրում: Անվանաթերթերի հարդարանքում ծաղկողը չի սահմանափակվել միայն ավանդական հորինվածքի ներկայացմամբ, այլ դիմել է ավելի բարդ լուծումների՝ միջավայրը հարստացնելով ձեռագրի ստացողի, ընտանիքի անդամների մասին տեղեկությունների փոխանցմամբ:

Ավետարանիչների դիմանկարներն արված են կանոնիկ պատկերագրության համաձայն, ըստ որի չորս ավետարանիչները ներկայացված են հորինվածքի կենտրոնում: Մատթեոսը և Հովհաննեսը, համարվելով ավագ սերնդի ավետարանիչներ, պատկերված են ծերունիների տեսքով, որին հակառակ՝ Մարկոս և Ղուկաս ավետարանիչները՝ առավել երիտասարդ տարիքում:

Ձեռագրի նկարազարդումները բավական դեկորատիվ են, որի մասին է փաստում նաև անվանաթերթերում տեղ գտած հիշատակությունները: Այդ քայլով ծաղկողը ոչ միայն փորձել է մեկ անգամ ևս կարևորել ձեռագրի ստացողի և ընտանիքի անդամների համառոտ հիշատակումները, այլ նաև գիրը դարձրել է գեղարվեստական հարդարանքի մաս: Վերջինս դուրս էր մնացել հետազոտողների ուշադրությունից:

Համառոտագրություններ

ՄՄ – Մաշտոցյան Մատենադարան

ՀՄԲ – Համար

Նկ. – նկար

Ձեռագրերի ցանկ

ՄՄ Հ^մ 5472 - Կեղծ Կալիսթենեսի՝ Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, ԺԶ (16) դար, գրչության վայր՝ Հռոմ, գրիչ՝ Զաքարիա եպիսկոպոս, ծաղկող՝ Զաքարիա եպիսկոպոս, Հակոբ Զուղայեցի:

ՄՄ Հ^մ 6758 – Ավետարան, 80-ականների առաջին կես, գրչության վայր՝ Թվնիկ գյուղ: Գրիչ՝ Ներսէս: Ծաղկող՝ Յակոբ: Ստացող՝ Կարապետ քահանա:

ՄՄ Հ^մ 7639 - Ավետարան, 1610 թ., գրչության վայր՝ Ասպահան, գրիչ, ծաղկող՝ Յակոբ երէց: Ստացող՝ խոջա Աւետիք:

ՄՄ Հ^մ 9691 - Ավետարան, 1585 թ. գրչության վայր՝ Կեղի, գրիչ, ծաղկող՝ Յակոբ Զուղայեցի, ստացող՝ Աստուածատուր քահանա, կազմող՝ Յակոբ դպիր (1762 թ.):

Մանչեսթրի Ջոն Ռայլենդսի գրադարանի հավաքածու «Arm. № 20» - Ավետարան, 1587 թ., գրչության վայր՝ Հին Ջուղա, գրիչ և ծաղկող՝ Յակոբ սարկավագ:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք Հ^մ 3424 - Ավետարան, 1592 թ., գրչության վայր՝ Ավանց գյուղ, գրիչ և ծաղկող՝ Յակոբ Ջուղայեցի:

Նոր Ջուղայի Սուրբ Սարգիս եկեղեցի Հ^մ 18 - Ավետարան, 1607 թ., գրչության վայր՝ Շոշ (Սպահան), գրիչ՝ Յակոբ երեց Ջուղայեցի:

Նոր Ջուղայի Սուրբ Ստեփանոս եկեղեցի Հ^մ 491, 1613 թ. – Ճաշոց, Նոր-Ջուղա, Գրիչ՝ Սարգիս: Ստացող՝ Պարոն Մարգարե: Ծաղկող՝ հաւանաբար Տէր Յակոբ:

List of Manuscripts

Matenadaran manuscript № 5472 – *The History of Alexander the Great by Pseudo-Callisthenes*, 16th century; place of copying: Rome; scribe: Bishop Zak'aria; illuminators: Bishop Zak'aria and Hakob of Julfa.

Matenadaran manuscript № 6758 – *Gospel*, early 1580s; place of copying: village of T'vnik; scribe: Nersēs; illuminator: Yakob; recipient: Priest Karapet.

Matenadaran manuscript № 7639 – *Gospel*, dated 1610; place of copying: Isfahan; scribe and illuminator: Yakob the Presbyter; recipient: Khoja Avetik.

Matenadaran manuscript № 9691 – *Gospel*, dated 1585; place of copying: Keghi; scribe and illuminator: Hakob of Julfa; recipient: Priest Astvatsatur; binder: Scribe Hakob (1762).

John Rylands Library, Manchester, manuscript "Arm. No. 20" – *Gospel*, dated 1587; place of copying: Old Julfa; scribe and illuminator: Deacon Hakob.

Manuscript № 3424, Monastery of Saint James, Jerusalem – *Gospel*, dated 1592; place of copying: village of Avants; scribe and illuminator: Hakob of Julfa.

Manuscript № 18, Saint Sargis Church, New Julfa – *Gospel*, dated 1607; place of copying: Shosh (Isfahan); scribe: Yakob the Presbyter of Julfa.

Manuscript № 491, Saint Stepanos Church, New Julfa – Lectionary, dated 1613; place of copying: New Julfa; scribe: Sargis; recipient: Paron Margarē; illuminator: presumably Ter Hakob.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Առաքելյան Մ. (2008)**, Պատկերազարդ Ավետարանների ուսումնասիրությունը Նոր Զուղայի դպրոցի շրջանականերում, Երևան, «Բանբեր Մատենադարանի», Հ^ր 18, էջ 125-138:
2. **Բեգլարյան Ս. (2022)**, Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հենքը, Երևան, «Բանբեր Մատենադարանի» Հ^ր 33, էջ 196 - 214:
3. **Դրամիյան Ի. (1971)**, Հակոբ Զուղայեցու մանրանկարների պատկերագրությունը, «Բանբեր Մատենադարանի» Հ^ր 10, Երևան, էջ 171-184:
4. **Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ. (1965)**, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Ա, Երևան, ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատ.:
5. **Եգանյան Օ., Զեյթունյան Ա., Անթաբյան Փ. (1970)**, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Բ, Երևան, Հայկական գիտությունների ակադեմիայի հրատ.:
6. **Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա. (1974)**, Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հատ. Ա, Երևան, Հայկական գիտությունների ակադեմիայի հրատ.:
7. **Մինասյան Լ. (1991)**, Գրչության արվեստը Նոր Զուղայում, Նոր Զուղա, Ս. Ամենափրկիչ Վանքի տպարան:
8. **Greenwood T., Vardanyan E. (2006)**, Hakob's Gospels: The Life and Work of an Armenian Artist of the Sixteenth Century, publisher: Sam Fogg, University of Michigan.

9. **Дрампян И. (2008)**, Акоп Джугаеци, Ереван, Изд. “Гитутюн” НАН РА.

REFERENCES

1. **Araqelyan M. (2008)**, Patkerazard Avetaranneri owsowmnasirowt'yowny' Nor Jowghayi dproci shrjanakanerowm /The Study of the Illustrated Gospels within the Framework of the New Julfa School/, The Bulletin of Matenadaran, No 18.
2. **Beglaryan S. (2022)**, T'oros Taronacow manrankarneri patkeragrowt'yan mariamabanakan henqy' /The mariological basis of T'oros Taronats'i's iconography/, The Bulletin of Matenadaran, No 33.
3. **Dramp'yan I. (1971)**, Hakob Jowghayecow manrankarneri patkeragrowt'yowny' /The iconography of Hakob Jughayetsi's miniatures/, The Bulletin of Matenadaran, No 10.
4. **Eganyan Ō., Zeyt'unyan A., Ant'abyan P'. (1965)**, Cowcak d'er'agrac Mashtoci anvan Matenadarani /Catalogue of Armenian Manuscripts of Mashtots Matenadaran/, vol. A, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR., Yerevan.
5. **Eganyan Ō., Zeyt'unyan A., Ant'abyan P'. (1970)**, Cowcak d'er'agrac Mashtoci anvan Matenadarani /Catalogue of Armenian Manuscripts of Mashtots Matenadaran/, vol. B, Publishing House of the Armenian Academy of Sciences.
6. **Hakobyan V., Hovhannisyan A. (1974)**, Hayeren d'er'agreri JhE' dari hishatakaranner (1601-1620 t't'.) /Colophons of Armenian manuscripts of the 17th century (1601-1620)/, Vol. A, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSH, Yerevan.
7. **Minasyan L. (1991)**, Grchowt'yan arvesty' Nor Jowghayowm /The Art of Writing in New Julfa/, Printing House of the Holy Savior Monastery, New Julfa.
8. **Greenwood T., Vardanyan E. (2006)**, Hakob's Gospels: The Life and Work of an Armenian Artist of the Sixteenth Century, publisher: Sam Fogg, University of Michigan.

9. **Drampjan I. (2008)**, Akop Dzhugaetsi /Akop Dzhugajeci/, Yerevan, “Gitutjun” publishing NAN RA.

Նկարների ցանկ

- Նկ. 1.** Մատթեոս ավետարանչի դիմանկարը և անվանաթերթը, ՄՄ 7639, 1610 թ., Նոր Զուղա, 73բ-74ա (լուսանկարը՝ ՄՄ):
- Նկ. 2.** Մարկոս ավետարանչի դիմանկարը և անվանաթերթը, ՄՄ 7639, 1610 թ., Նոր Զուղա, 137բ-138ա (լուսանկարը՝ ՄՄ):
- Նկ. 3.** Ղուկաս ավետարանչի դիմանկարը և անվանաթերթը, ՄՄ 7639, 1610 թ., Նոր Զուղա, 179բ-180ա (լուսանկարը՝ ՄՄ):
- Նկ. 4.** Հովհաննես ավետարանչի դիմանկարը և անվանաթերթը, ՄՄ 7639, 1610 թ., Նոր Զուղա, 245բ-246ա (լուսանկարը՝ ՄՄ):

List of Illustrations

- Fig. 1.** Matt'eos avetaranchi dimankary' ev anvanat'ert'y' /Portrait of the Evangelist Matthew and the title page/, MS 7639, 1610, New Julfa, fols. 73v–74r (photo: Matenadaran).
- Fig. 2.** Markos avetaranchi dimankary' ev anvanat'ert'y' /Portrait of the Evangelist Mark and the title page/, MS 7639, 1610, New Julfa, fols. 137v–138r (photo: Matenadaran).
- Fig. 3.** Ghowkas avetaranchi dimankary' ev anvanat'ert'y' /Portrait of the Evangelist Luke and the title page/, MS 7639, 1610, New Julfa, fols. 179v–180r (photo: Matenadaran).
- Fig. 4.** Hovhannes avetaranchi dimankary' ev anvanat'ert'y' /Portrait of the Evangelist John and the title page/, MS 7639, 1610, New Julfa, fols. 245v–246r (photo: Matenadaran).

Greta Gasparyan

An examination of the artistic decoration of the portraits of the evangelists and their title pages in the Matenadaran manuscript № 7639

Conclusion

Key words and expressions: *Matenadaran Collection, New Julfa, New Julfa Miniature School, Hakob Jughayets'i, Gospel, Evangelist, Title Page, Miniature.*

Among the numerous manuscripts preserved in the Matenadaran collection and created in the Armenian center of New Julfa, manuscript № 7639 occupies a special place. It stands out due to its approximately sixty miniatures, which are stylistically and thematically closely connected with the text of the Gospels. The manuscript was created in 1610 and is attributed to the well-known miniaturist Hakob Jughayets'i. This study reviews nine manuscripts ascribed to this master, while also clarifying specific information concerning their identification and present location.

Particular attention is paid to the artistic analysis of the evangelists' portraits and their title pages. Each Gospel in the manuscript begins with a miniature depicting the evangelist at the moment of divine inspiration. The compositional solutions reflect a synthesis of traditional and innovative elements, revealing both iconographic conventions and the artist's individual style.

The title pages serve not only a decorative but also a memorial function, preserving information about the patron and his family. The study demonstrates that the decoration of manuscript № 7639 reflects the rich artistic tradition of 17th-century Armenian miniature painting and deserves to be considered an important source for the study of late medieval book art. Special attention is also given to the scenes of divine inspiration and their symbolic meaning in 17th-century Armenian book culture, confirming the significance of this manuscript for the study of New Julfa art and Armenian miniature in general.

Грета Гаспарян

Исследование художественного оформления портретов евангелистов и их титульных страниц в рукописи Матенадарана № 7639

Заключение

Ключевые слова и выражения: Коллекция Матенадарана, Новая Джульфа, миниатюрная школа Новой Джульфы, Акобу Джугаеци, Евангелие, евангелист, титульная страница, миниатюра.

Среди многочисленных рукописей, хранящихся в коллекции Матенадарана и созданных в Новой Джульфы, рукопись № 7639 занимает особое место благодаря своим примерно шестидесяти миниатюрам, стилистически и тематически тесно связанным с текстом Евангелия. Рукопись была создана в 1610 году и приписывается известному миниатюристу Акобу Джугаеци. В исследовании рассматриваются данные о девяти рукописях, приписываемых этому мастеру, а также уточняются отдельные сведения, касающиеся их идентификации и местонахождения.

Особое внимание уделяется художественному анализу портретов евангелистов и их титульных страниц. В рукописи каждое Евангелие начинается с миниатюры, изображающей евангелиста в момент божественного вдохновения. Композиционные решения сочетают традиционные и новаторские элементы, раскрывающие как иконографические каноны, так и индивидуальный почерк художника.

Титульные страницы несут не только декоративную, но и мемориальную функцию, сохраняя сведения о заказчике и его семье. Исследование показывает, что оформление рукописи № 7639 отражает богатую художественную традицию армянской миниатюры XVII века и заслуживает рассмотрения как важный источник по изучению книжного искусства позднего средневековья. Внимание уделено сценам божественного вдохновения евангелистов и их символическому значению в армянской книжной культуре XVII века, что подтверждает значимость

данной рукописи как источника по изучению искусства Новой Джульфы и армянской миниатюры в целом.

Գրետա Գասպարյան – Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան՝ հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտ և Միջնադարյան արվեստի ուսումնասիրման բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Նոր Զուղայի ձեռագրերի գեղարվեստական հարդարանքը, Նոր Զուղայի որմնանկարչությունը և ճարտարապետությունը: Հեղինակ է 5 հոդվածի: arthistoriangreta@gmail.com

Грета Гаспарян - Аспирант Института древних рукописей Матенадарана имени Месропа Маштоца, научный сотрудник отдела Средневекового искусства. Сфера научных интересов: Художественное оформление рукописей Новой Джульфы, Фрески и архитектура Новой Джульфы. Автор около пяти статей. arthistoriangreta@gmail.com

Greta Gasparyan - PhD student at the Matenadaran, Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts, and Researcher at the Department of Medieval Art Studies. Scientific interests: the artistic decoration of New Julfa manuscripts, New Julfa frescoes and architecture. She is the author of about five articles. arthistoriangreta@gmail.com.

Խմբագրություն է ուղարկվել 26.02.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 14.03.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.